Յակոբն առաջ արաւ երկու աղախնուն իրանց որդեքանցով, ետնէն Լիին իր որդեքանցով, և դիպ ետնէն Ռաքէլին և Յովսէփին, և ինքը անցկացաւ նրրանց մէն առաջ, և երկրպագեց եօթն անգամ գետնի վրրա մինչև կը-մօտկենայր իր եղբօրը. Եսաւը վազեց նրրան առաջ, ճիտ արաւ նրրան, և ընկաւ նրրա չինքի վրրա, պաչեց նրրան, և լաց ելան երկուսնեւեսս. Եսաւը վիր մտիկ երեսս, տեսաւ կնկանեքանցը և երեխանցը, և ասում է. դրրանք ինչ են քոնը. նա ասում է. իմ երեխայքն Յակոբայ պատարագք են տեառն իւրում Եսաւայ և ինքն զկնի մեր գայ, պատուիրեաց առաջնումն և երկրորդին և երրորդի, քանզի ասէր՝ թէ ցածուցից զերեսս նորա պատարագօք, և ապա տեսից զերեսս նորա, թերևս արասցէ մեծարան երեսաց իմոց. և երթային յառաջ ընծայքն քան զնա, և ինքն նընջեաց զայն գիշեր. Եւ 'ի վաղիւ՝ ետես, ահա Եսաւ եղբայր իւր գայր, և ընդ նմա արք չորեքհարիւր.

Այրար Յակոբ զերկուս աղախնայսն և զորդիս նոցա առաջի, զԼիայ և զորդիս նորա զկնի, և զՌաքէլ և զզ Յովսէփ հուսկ յետոյ, և ինքն անց յառաջ քան զնասս, և երկիրեալագ եօթն անգամ 'ի վերայ երկրի մինչև մերձենալ առ եղբայրն իւր. Ընթացաւ Եսաւ առաջի նորա, գիրկս արկ նմա, և անկաւ 'ի վերայ պարանոցի նորա, համբուրեաց զնա, և լացին երկոքեան. Եւ հայեցեալ Եսաւայ 'ի վեր՝ ետես զկանայսն և զմանկունս, և ասէ. զոքա զի՞նչ են քո.

են որոնցովը Աստուած ողորմութիւն արաւ ծառայիդ. Եւ մօտ գնացին, երկրպագեցին Եսաւին՝ աղախնայքը և իրանց որդիքը, և Լիան և իր որդիքը, յետոյ Յովսէփն և Ռաքէլը.

Եսաւն ասում է. էն ամենը չուն ինչ էր որը որ ինձ հանդիպեց. Յակոբն ասում է. (էնդուր համար է) որ ծառայդ շնորհ գտնէ քո առաջը. Եսաւն ասում է. եղբայր ես էլ շատ ունիմ, քոնը քեզ լինի. Յակոբն ասում է. չէ խնդրեմ, թէ շնորհ գտայ քո առաջը՝ ընկալ ընծայքը իմ ձեռնէն, ընչուոր էնպէս տեսայ քո երեսը՝ ինչպէս որ ոքմին Աստծու երեսը տեսնէ խաղաղուած ինձ հետ, ստիպեց նըրան, և (նա) ընկալաւ. Եսաւն ասում է. չուլինիք, գնանք, երթանք դէպուղիղ. Յակոբն ասում է. երեխայքս մատղաշ են, և ոչխարն և տաւարը ծնունդ ունէ արած, և թէ մի օր դըրանցը չտապեցնեմ՝ խաշինքը կմեռնին, ապա՝ թող իմ տէրը առաջ երթայ մինչև ես էլ կգամ. Եսաւը յետ դարձ

Նա ասէ. մանկունք իմ են որովք ողորմեցաւ Աստուած ծառայի քում. Եւ մատեան երկիրպագին Եսաւայ՝ աղախնայք և որդիք նոցա, և Լիա և որդիք իւր, յետոյ Յովսէփ և Ռաքէլ.

Եսաւ ասէ. զինչ էր այն ամենայն չու որ ինձ դիպեցաւ. Յակոբ ասէ. զի գըտցէ ծառայ քո շնորհս առաջի քո.

Եսաւ ասէ. կայ և իմ շատ եղբայր, քեզ լիցի քոյդ. Յակոբ ասէ. մի այդպէս, եթէ գըտի շնորհս առաջի քո՝ ընկալ զընծայսն 'ի ձեռաց իմոց, քանզի այնպէս տեսի զերեսս քո՝ որպէս ոք տեսանիցէ զերեսս Աստուծոյ զուարթացեալ ընդիս, բանադատեաց զնա, և առ.

Եսաւ ասէ. չուեսցուք, գընասցուք, երթիցուք զուղղորդըն. Յակոբ ասէ. մանկունքըս մատաղ են և ոչխարքի և արջառոյ ծնունդ արձակեալ է և եթէ մի օր ստիպեմ զդոսա՝ մեռանին խաշինքըն, այլ յառաջեսցէ տէրը իմ մինչև եկից և ես.

Եւ դարձաւ Եսաւ յաւուրը

ձաւ էն օրը իր ճանապարհո-
վը դէպի Սէիր ։

Գլ. Թ.

Աստուած ասում է Յակո-
բին . անց կաց 'ի Բեթէլ , և
էնտեղ սեղան կարարես Աս-
տծու համար որըոր երե-
ւեց քեզ քո փախչելիս քո
եղբայր Եսաւիմէն . Յակոբն
ասում է իր ընտանեացը .
սրբուէք և փոխէք շորենե-
ըդ , ելնենք 'ի Բեթէլ , սե-
ղան արարենք էնտեղ Աս-
տծու համար որըոր լսեց
ինձ (իմ) նեղութիւնի օրը .
Եւ սեղան չինեց էնտեղ և
կոչեց էն տեղի անունը Բե-
թէլ . Էնտեղ Աստուած ե-
րևեց Յակոբին , և օրհնեց
նըրան՝ ասում է . անունդ Յա-
կոբ (է) , էլ Յակոբ չի կոչուել ,
այլ Իսրայէլ կլինի անունդ ,
և կոչեց նըրա անունը Իսրա-
յէլ , ասում է նըրան . ես եմ
քո Աստուածը , աճիր և բազ-
մացիր , ազգեր և ազգերի ժո-
ղով կծնին քեզմէն , և թագաւ-
որներ դուրս կգան քեզանից .
Յակոբը չու ելաւ Բեթե-
լէն՝ գնայ իր հայր Իսահակի
մօտ . Ճանապարհին Ռաքէլը

յայնմիկ ընդ ճանապարհս իւր
'ի Սէիր ։

Գլ. Թ.

Աստուած ասէ ցՅակոբ .
անց 'ի Բեթէլ , և արասցես
անդ սեղան Աստուծոյ որ
երևեցաւն քեզ 'ի փախչել քո
յերեսաց Եսաւայ եղբօր քոյ .
Յակոբ ասէ ցընտանիսն իւր .
սրբեցարուք և փոխեցէք զգ
պատմուճանս ձեր , ելցուք 'ի
Բեթէլ , արասցուք անդ սե-
ղան Աստուծոյ որ լուաւ ինձ
յաւուր նեղութեան .

Եւ չինեաց անդ սեղան , և
կոչեաց զանուն տեղւոյն այ-
նորիկ Բեթէլ . երևեցաւ անդ
Աստուած Յակոբայ , և օրհ-
նեաց զնա՝ ասէ . անուն քո
Յակոբ , ոչ ևս կոչեսցի Յա-
կոբ , այլ Իսրայէլ եղիցի ա-
նուն քո և կոչեաց զանուն
նորա Իսրայէլ , ասէ ցնա . ես
եմ Աստուած քո , աճեսջիր
և բազմասջիր , ազգք և ժո-
ղովուրդք ազգաց եղիցին 'ի
քէն , և թագաւորք ելցեն 'ի քէն .
Եւ չուեաց Յակոբ 'ի Բե-
թելայ գնալ առ Իսահակ
հայր իւր . 'Ի ճանապարհին

որդի եբի, շատ դժուար ե-
բի, և ոգին տալիս՝ ընչուոր
մեռաւ (Ռաքէլը՝) կանչեց որ-
դու անունը "Բենոնի,, , և
հայրը կոչեց նորան Բենիա-
մին, Եւ Յակոբի որդիքն է-
ին տասնեւերկու. անդրա-
նիկը Ռուբէն, Շմաւոն, Ղե-
ւի, Յուդա, Իսաքար, Զա-
բուղոն, Դան, Նեփթաղիմ,
Գադ, Ասեր, և Ռաքէլի
որդիքը. Յովսէփ և Բենիամին
Էս են Յակոբի որդիքը որոնք
եկան նորան Միջագետքումը.
Յակոբը յետ եկաւ իր հայր
Իսահակի մոտ, Մամբրէ քա-
ղաք, Քանանացոց երկրումը
որտեղոր Աբրահամն և Իսա-
հակը պանդխտութիւն արին.
Իսահակը տկարացած մե-
ռաւ, և նորան Եսաւն և Յա-
կոբ իր որդիքը թաղեցին.

ծնաւ Ռաքէլ, և դժուարա-
ծին եղև, և ընդ հանել ո-
գւոցն՝ քանզի մեռաւ (Ռա-
քէլ՝) կոչեաց զանուն որդւոյն
"որդի վշտաց իմոց,, և հայ-
ր նն կոչեաց զնա Բենիամին. Եւ
էին որդիք Յակոբայ երկո-
տասանք. անդրանիկ նորա
Ռուբէն, Շմաւոն, Ղևի,
Յուդա, Իսաքար, Զաբու-
ղոն, Դան, Նեփթաղիմ,
Գադ, Ասեր, և որդիք Ռա-
քէլի Յովսէփ և Բենիամին.
Այս են որդիք Յակոբայ որ
եղեն նմա 'ի Միջագետս. Եկն
Յակոբ առ Իսահակ հայր իւր
'ի Մամբրէ քաղաք, յերկ-
րին Քանանացւոց, ուր պան-
դխտեցան Աբրաամ և Իսա-
հակ. Եւ պակասեալ Իսահա-
կայ մեռաւ, և թաղեցին զնա
Եսաւ և Յակոբ որդիք իւր.

Գլ. Ժ.

Եսաւը վեր առաւ իր կընկ-
տեքանցը որոնք Քանանացոց
դստերերից էին, իր ուստերե-
րուն և դստերերուն, և իր տան
ամեն մարդեքանցը, և (իր)
ամեն ունելիքը և անասունը,
գնաց Քանանացոց երկրէն
իր եղբայր Յակոբիմէն դէն,

Ա. Եսաւ զկանայս իւր
որք էին 'ի դստերաց Քա-
նանացւոյ, զուստերս և զդս-
տերս իւր, և զամենայն մար-
դիկ տան իւրոյ, և զամենայն
ինչս և զանասուն, գնայ յեր-
կրէն Քանանացւոց յերեսաց
Յակոբայ եղբօր իւրոյ, զի

ընչուր էնքան չատ ունելիք ու-
նէին նըրանք որ չէին կարու-
եալ միասին բնակիլ, և ոչ էն
պանդխտական երկիրն էր կա-
ռում նըրանցը տեղաւորել,
(գնաց) և բնակուեց Սէիր
լերնումը, և Յակոբը իր որ-
դեքանցով բնակուած էր Քա-
նանացոց երկրումը. Նըրա
որդի Յովսէփը տասնեւեօթը
տարեկան էր, խաշինք էր արա-
ծեցնում եղբարտեքանց հետ.
Եւ չար համբաւ էին բերում
իրանց հայը Իսրայէլի մօտ
Յովսէփի վըրա, բայց Իս-
րայէլը իր ամեն որդեքանց
վըրա էլի Յովսէփին էր սի-
րում, էնդուր որ նըրա ծերու-
թիւնի որդին էր, և նըրա հա-
մար վիշիպիշի կապայ արեց.
Նըրա եղբարտեքը՝ որ տե-
սան որ հայրը իր ամեն որ-
դեքանց վըրա նըրան է սի-
րում, ատեցին նըրան. Յով-
սէփը երազ տեսաւ, և պատ-
մեց իր եղբարտեքանցը, և էլ
աւելի ատեցին նըրան. Մէ
լսէք՝ նըրանցն է ասում, երա-
զը որնոր տեսայ. Թուում
էր որ մի դաշտումը խուրձ
էինք կապում, և իմ խուրձը
վեր կացաւ ցից կանգնեց,
էին բաղում ինչք նոցա 'ի մի-
ասին բնակելոյ, և ոչ կարէր
երկիրն պանդխտութեան հան-
դարտել նոցա և բնակեցաւ
'ի լերինն Սէիր, և Յակոբ
որդովք իւրովք հանդերձ բը-
նակէր յերկրին Քանանաց-
ւոց.

Յովսէփ որդի նորա եօթնը-
ուտասնամեայ էր, արածէր եղ-
բարքն հանդերձ խաշինս.

Եւ բերէին համբաւ չար ըզ
Յովսէփայ առ Իսրայէլ հայ-
ըն իւրեանց, բայց Իսրայ-
էլ սիրէր զՅովսէփ առաւել
քան զամենայն որդիսն իւր,
քանզի որդի ծերութեան նո-
րա էր, և արար նմա պատ-
մուճան ծաղկեայ.

Իբրև տեսին եղբարքն նո-
րա՝ թէ սիրէ զնա հայրն քան
զամենայն որդիս իւր, ատե-
ցին զնա. Եւ տես Յովսէփ ե-
րազ, և պատմեաց եղբարց
իւրոց, և յաւելին ևս ատելըզ
նա. Ասէ ցնոսա. լուարուք
զերազն զոր տեսի. Թուէր
եթէ որայ կապեաք 'ի դաշտի
միում, և կանգնեցաւ որայն
իմ եկաց ուղղորդ, և դար-
ձան որայքն ձեր, և պա-

և ձեր խրձերը դարձան, և երկրպագեցին իմ խրձին. մինթէ ապա՝ նըրան իր եղբարտիքն ասում են, զորդ կթագաւորես մեզ վըրա, և էլ աւելի ատեցին նըրան իր երազների համար. Ուրիշ էլի երազ տեսաւ, և պատմեց իր հօրը և իր եղբարտեքանցը, ասում է. տեսնում էի իբրև թէ արեգակն և լուսնիկը, և տասնեւմին աստղը ինձ երկրպագում էին. Սաստեց նըրան իր հայրը, ասում է. ինչ է էդ երազը որնոր տեսել ես. զո՞րդ՝ պիտի գանք ես, մայրըդ, եղբարտիքդ քեզ երկրպագենք. Եւ նախանձուեցին նըրա վըրա իր եղբարտիքը.

Գնացին եղբարտիքը իրանց հօր խաշինքը արածեցնելու 'ի Սիւքեմ. և Իսրայէլն ասում է Յովսէփին. արի ղրկեմ քեզ քո եղբարտեքանց մօտ՝, գնա՝ տես լա՞ւ են եղբարտիքըդ և խաշինքը և անցանքս բեր ինձ. (Յովսէփն) եկաւ Սիւքէմ, և մի մարդ նըրան գտաւ դաշտումը մոլորուած, հարցուց մարդը նըրան ինչ ես պտռում և նա ասում է եղբարտեքանցս եմ պտռում, գին երկիր իմում որայոյն. և ասեն ցնա եղբարքն իւր. մինթէ թագաւորելով թագաւորեսցես 'ի վերայ մեր, և յաւելին ևս ատել զնա վասն երազոցն նորա. Եւ տես միւս ևս երազ, և պատմեաց հօր իւրում և եղբարց իւրոց, և ասէ. տեսանէի որպէս թէ արեգակն և լուսին, և մեծասան աստղք երկիրպագանէին ինձ. Սաստեաց նմա հայրն իւր, և ասէ. զինչ է երազդ զոր տեսեր. արդ՝ գալով գայցեմք ես և մայր քո և եղբարք քո, և երկիրպագանիցեմք քեզ. Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր.

Գնացին եղբարք նորա արածել զխաշինս հօրն իւրեանց 'ի Սիւքեմ, և ասէ Իսրայէլ ցՅովսէփ. եկ առաքեցից զքեզ առ եղբարս քոյ երթ տես եթէ ողջ իցեն եղբարքն քո և խաշինք և բեր ինձ զրոյց. Եկն (Յովսէփ) 'ի Սիւքէմ, և եգիտ զնա այր մի մոլորեալ 'ի դաշտին, եհարց ցնա այրն. զինչ խընդրես և նա ասէ զեղբարսն իմ խնդրեմ պատմեա՛ ինձ ո՞ւր

ամաց արա՛ ինձ որտի ելի՝ արծեցնում։ Մարդն ասում է նըրան. վեր ելան էստեղանց և լսեցի որ ասում էին. երթանք Դովթայիմ, և Յովսէփը գնաց իր եղբարտեքանց ետնէն, և գտաւ նըրանցը 'ի Դովթայիմ։ Եղբարտիքը տեսան նըրան առաջ հեռուէն, (և) դեռոր չէր մօտ կացել նըրանցը, չար միտք բըռնեցին նըրան սպանելու.

Եւ ասում են մէկմէկին. հըրէս պարոն երազտեսնողը գալիս է, եկէք սպանենք նըրան, գձենք էս հորերիս մինումը, և ասենք որ չար գազանը կերաւ նըրան, և տեսնենք ինչ կլինին նըրա երազները։ Ռոբէնը էս լսած՝ ասում է նըրանցը. արիւն մի վիթէք, այլ գձէք դըրան էս անապատի մի հորումը, և ձեռը մի գձէք դըրա վըրա, (էս՝ ասեց) որ թափէ նըրան նըրանց ձեռնէն, և հասցնէ նըրան իր հօրը։

Հէնցոր Յովսէփն եկաւ իր եղբարտեքանց մօտ՝ հանեցին նըրա զգիսվէզի կապոյն իր վրայէն, վեր առան գձեցին նըրան հորը. հորը դարտակ արածիցեն.

Ասէ ցնա այրն. բարձին ասա՛ և լուայ զի ասէին. երթիցուք 'ի Դովթայիմ, և գընայ Յովսէփ զհետ եղբարց իւրոց, և եգիտ զնոսա 'ի Դովթայիմ։

Տեսին զնա եղբարքն յառաջագոյն 'ի հեռաստանէ, մինչչև մօտ եկեալ էր առ նոսա, խորհուրդ վատ 'ի մէջ առին սպանանել զնա.

Եւ ասեն իւրաքանչիւր ցեղ բայր իւր. ահա երազատեսն գայ, եկա՛յք սպանցուք զնա և ընկեսցուք 'ի մի 'ի գբոց աստի, և ասասցուք եթէ գազան չար եկեր զնա, և տեսցուք զինչ լինիցին երազքն նորա։

Իբրև լուաւ Ռոբէն՝ ասէ ցնոսա. մի հեղցուք արիւն, այլ արկէք զդա 'ի գուբ մի յանապատի աստ, և ձեռն մի արկանէք 'ի նա, զի թափիցէ զնա 'ի ձեռաց նոցա, և հասուցանիցէ զնա առ հայր իւր

Իբրև եկն Յովսէփ առ եղբարսն իւր՝ մերկացին զպատմուճանն նորա ծաղկեայ 'ի նմանէ, և առին ընկեցին ըզ նա 'ի գուբն, և գուբն ունայն

էր և ջուր չկայր էնդումը. ի-
ժում նատեցին հայ ուտելու.
Էն գամնք Իսմայելացի ճանա-
հարդներ էին անց կենում, նը-
բանց ուղտաները լիքն էին ին-
կերով, և գնում էին Յեգի-
պտոս տանելու.

Յուդան ասում է իր եղ-
բարտերանցը. ինչ օգուտ է
որ սպանենք մեր եղբորը, և
թաքցնենք նրա արիւնը, ե-
կէք ծախենք նրան էն Իս-
մայելացոց վրա, և մեր ձեռ-
ները չաղախուին նրանում
մը, ընչուոր մեր եղբայր և
մեր մարմին է. Լսեցին նրան
իր եղբարտիքը, քաշեցին հա-
նեցին Յովսէփին հորիցը, և
ծախեցին նրան Իսմայելա-
ցոց վրա 'քսան դահեկանի
և (նրանք) Յովսէփին տարան
Յեգիպտոս. Եւ (եղբարտիքը)
Յովսէփի կապայն վեր առած՝
մի ուլ մորթեցին, թաթախե-
ցին կապայն արիւնումը, և
ղրկեցին էն զգիտիվի կապայն
իրանց հոր մօտ, ասում են.
գտանք էդ, ճանաչիր էդ քո՞
որդու կապայն է՝ թէ չէ.
Ճանաչեց էն, և ասում է. էս
իմ որդու կապայն է, չար
գազանն է կերել նրան, գա-

էր և ջուր ոչ գոյր 'ի նմա.
և նստան ուտել զհացն.
Ա. ռ այն ճանապարհորդք Իս-
մայելացիք անցանէին, և
ուղտք նոցա լի էին խնկով.
և երթային իջուցանել Յե-
գիպտոս.

Ասէ Յուդա ցեղբարսն իւր.
զինչ օգուտ է եթէ սպանա-
նիցեմք զեղբայրն մեր, և թա-
քուցանիցեմք զարիւն նորա,
եկայք վաճառեսցուք զնա
Իսմայելացւոցն, և ձեռք մեր
մի չաղախեսցին 'ի նմա, զի
եղբայր և մարմին մեր է.
Լուան նմա եղբարքն իւր,
ձգեցին հանին զՅովսէփ 'ի
գրոյ անտի, և վաճառեցին
զնա Իսմայելացւոցն քսան դա-
հեկանի, և իջուցին (նորա) ըզ
Յովսէփ Յեգիպտոս.
Եւ առեալ (եղբարցն) զպատ-
մուճանն Յովսէփայ՝ զենին ուլ
մի, և թաթաւեցին զպատմու-
ճանն յարեանն, և առաքե-
ցին զպատմուճանն ծաղկեայ
տանել առ հայրն իւրեանց,
և ասեն. զայդ գտաք ծա-
նիր եթէ որդւոյ քոյիցէ պատ-
մուճանդ եթէ ոչ. Ծանեաւ
զնա, և ասէ. պատմուճանս
որդւոյ իմոյ է, գազան չար ե-

զանն է գՀլտել Յովսէփին։ Յակոբը (կակծու) պատռտեց իր շորերը, և շատ օրեր սուգ նստեց իր որդու վրրա։ Ժողովուեցին նրրա ամեն ուստերը և դստերը, եկան նրրան մխիթարելու և չէր ուզում մխիթարուիլ, ասում էր. թող էս սգով ես դէվէր գընամ իմ որդու մնա գերեզմանը։ Էնպէս լաց արաւ նրրան իր հայրը։

Իսմայելացիքը ծախեցին Յովսէփին յԵգիպտոս, և նրրան Պետափրէսն առաւ Փարաւոնի ներքինին, դահճապետը, և Աստուած Յովսէփի հետ էր։ Նրրա տէրը որ գիտեց որ Աստուած նրրա հետ է, և ամեն ինչ որ նա անում էր՝ Աստուած նրրա ձեռներումը աջողեցնում էր, նրրան կացուց իր տան վրրա, և ամեն ինչը նրրան պահ եր։ Աստուած օրհնեց Եգիպտացու տունը Յովսէփի համար, և Աստծու օրհնութիւնն եղաւ ամեն նրրա ունեցածի վրրա, տանը և յանդումը, և եթող ամեն ինչ որ իրն էր Յովսէփի ձեռին։ Էս բաներէն յետոյ պատահեց՝

կեր զնա, գաղան յափշտակեց զՅովսէփ։ Եւ պատռեաց Յակոբ զհանդերձս իւր, և սուգ ունէր 'ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս։ Եւ ժողովեցան ամենայն ուստերք և դստերք նորա, եկին մխիթարել զնա և ոչ կամէր մխիթարիլ, ասէր։ զի իջից ես սովին սգով առ որդի իմ ի գերեզման։ Եւ ելաց զնա հայրն իւր։

Իսմայելացիքն վաճառեցին զՅովսէփ յԵգիպտոս և դընեաց զնա Պետափրէս ներքինի Փարաւոնի, դահճապետ, և էր Աստուած ընդ Յովսէփայ։ Իբրև գիտաց տէր նորա թէ Աստուած ընդ նրմա է՝ և զամենայն ինչ և առնէր նա՝ Աստուած յաջողէր ի ձեռս նորա, կացոյց զնա ի վերայ տան իւրոյ և զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա։ Օրհնեաց Աստուած զտուն Եգիպտացւոյն վասն Յովսէփայ, և եղև օրհնութիւն Աստուծոյ 'ի վերայ ամենայն ընչից նորա ի տան և յանդի, և եթող զամենայն որ ինչ իւր էր 'ի ձեռս Յովսէփայ։ Եւ եղև յետ բանից այսոցիկ՝

Յովսէփը ոչինչ գէթ չէր ա-
բել, և ան միկնոջ խօսքերով
գձեցին նրրան բանտը.
(Էնտեղ) էլ Աստուած Յով-
սէփի հետ էր, և ողորմութիւն
գձեց վրայումը, շնորհ (գտնել)
երես նրրան բանտապետի ա-
ռաջը, էնպէս որ՝ նա Յով-
սէփին պահ երես բանտն և
ամեն կալանաւորներուն որրոր
բանտումն էին, և ամեն ինչ
որ անուում էր էնտեղ, նա
էր անել տուողը. Էս բանե-
րէն յետոյ, արքայի տակա-
ռապետը մեղք արաւ, և Փա-
րաւօնը բարկացաւ նրրա վը-
րա, և եղի նրրան բանտը
որտեղոր Յովսէփն էր.

Տակառապետը բանտումը
որ էր, երազ տեսաւ, էն ա-
ռաւօտը Յովսէփը ներս մը-
տաւ նրրա մօտ, և տեսաւ նը-
րան այլայլուած, հարցուց՝ ա-
սում է. ընչի՞ է երեսդ էսօր
տրտում. Ասում է. երազ եմ
տեսել, և ոչոք էնդու մեկնող
չկայ. Յովսէփն ասում է նը-
րան. չէ՞ ապա որ էնդու մեկ-
նութիւնը Աստծու ձեռին
է, պատմե ինձ։ Եւ տակա-
ռապետը պատմեց իր երազը
Յովսէփին, ասում է. թու�
չէր ինչ ինձաս արարեալ Յով-
սէփայ և ըստ բանից տիկ-
նոջ ոչ ոչ ոչ

էր ինձ երազումն՝ մի վաղն (էր) իմ առաջը, և վաղնի վերա (էր) երեք ճիւղ, շատ կանաչ և երեք ճոթ հաղող ունէր հասած, և Փարաւոնի թասը ձեռիս էր. վեր էի առնում հաղողը, ճմրռում էի թասումը, և տալիս էի թասը Փարաւոնի ձեռը. Յովսէփն ասում է նորան. էնդու մեկնութիւնը էս է. երեք ճիւղը, երեք օր է. Էս երեք օրումը Փարաւոնը միտը կբերէ քո գլխաւորութիւնը և յետ նոյն քո տակառապետութենումը կկացուցանէ քեզ, և Փարաւոնի թասը կտաս իր ձեռը ըստ քո առաջի պաշտօնին ինչպէս որ և տակառապետ էիր.

Այլ միտդ բեր ինձ (Յովսէփն է ասում՝) որժամոր (էն) բաղդաւորութիւնը քեզ հանդիպի, և ինձ բարութիւն ա՛րա, հանիր ինձ էս բանտից, ընչուոր գողացան ինձ Եբրայեցոց երկրից, և էստեղ ոչինչ չեմ արել և գձեցին ինձ էս տուն. Վրա երրորդ օրը Փարաւոնի ծննդեան օրն էր, ուրախութիւն էր անում, և միտն եբի տակառապետի գլուխեանը իմում որթ մի առաջի իմ, և յորթն երեք ուռք կանաչք յոյժ, և ունէր երիս ողկոյզս խաղողոյ հասեալս, և բաժակն Փարաւոնի ձեռին իմում, առնուի ըզ խաղողն, ճմլէի 'ի բաժակն, և տայի զբաժակն 'ի ձեռս Փարաւոնի. Եւ ասէ ցնա Յովսէփ. այս է մեկնութիւն նորա. երեք ուռքն, երեք աւուրք են. Յերիս աւուրս յայսոսիկ յիշեսցէ Փարաւոն զիշխանութիւն քո և անդէն 'ի նմին տակառապետութեան քում կացուսցէ զքեզ, և տացես զբաժակն Փարաւոնի 'ի ձեռս նորա ըստ առաջնոյ իշխանութեան քո որպէս և էիր տակառապետ.

Այլ զիս յիշեսջիր, յորժամ բարի լինիցի քեզ, և արա՛ ինձ ողորմութիւն, հան զիս 'ի բանտէ յայսմանէ, զի գողացան զիս յերկրէն Եբրայեցւոց, և ասա՛ ինչ ոչ արարի և արկին զիս 'ի տուն յայս. Յաւուրն երրորդի օր ծննդոց էր Փարաւոնի, առնէր ուրախութիւն, և յիշեաց զիշխանութիւն տակառապետին, կացոյց զնա անդէն յիշ-

խաւորութիւնը, կացուց նրրան յետ իր պաշտօնումը, և մնա տարաւ թագը Փարաւոնին. և տակառապետը միայն չերի Յովսէփին, այլ մոռացաւ նրրան.

Գ. Լ. ԺԱ.

Երկու տարու վերայ Փարաւոնը երազ տեսաւ, թու

էր (իրան՝) գետի ափը կանգնած է, և հրէս գետիցը եօթը ջհել կով էին դուրս գալիս, սիրուն տեսնելուէք, և գիրուկներ, արածում էին գետի ափը, և նրրանց ետնէն գետիցը ուրիշ էլի եօթը ջրհել կով էին դուրս գալիս, լղարներ և փնթի տեսնելուէք, և արածում էին, և կերան եօթը ջհել կովը փնթիքը եօթը ջհել կովին սիրուններուն. Փարաւոնը զարթեց, և յետ քուն մնաւ, և տեսաւ երկրորդ երազ, և հրէս եօթը հասկ էին դուրս գալիս մին տակառու վերայ, լիքլիքներ և սիրուններ, հրէս էնդոնց ետնէն ուրիշ եօթը հասկ էին դուրս գալիս փուճեր և խորշակի խբածներ, և եօթը փուճ և խորշակի խբած հասկերը կուլ խանութեան իւրում, և ետ ըզ բաժակն 'ի ձեռս Փարաւոնի. և ոչ յիշեաց տակառապետն զՅովսէփ, այլ մոռացաւ զնա.

Յետ երկուց ամաց ետես Փարաւոն երազ, թուէր՝ կայցէ յեզը գետոյ, և ահա 'ի գետոյ անտի ելանէին եօթն երինջք գեղեցիկ տեսանելով, և ընտիրք մարմնով, և արածէին առ եզեր գետոյն, և այլ ևս եօթն երինջք ելանէին յետ նոցա 'ի գետոյ անտի, վատք և զազիրք տեսանելով և արածէին, և ուտէին եօթն երինջք զազիրք զեօթն երինջս գեղեցիկս.

Զարթեաւ Փարաւոն, և անդրէն 'ի քուն եմուտ, և ետես երազ երկրորդ, և ահա եօթն հասկ ելանէին 'ի միում փնջի ատոքք և գեղեցիկք, և ահա եօթն այլ հասկք սինք և խորշակահարք ելանէին յետ նոցա, և կլանէին եօթն հասկքն սինք և խորշակահարք զեօթն հասկսն զատոքս.

տուին եօթը լիքլիք հասկերուն. Փարաւօնը զարթեց, և երազ էր. առաւօտը նըրա ոգին խրտնած էր և զրկեց կանչեց Եգիպտոսի ամեն երազահաններուն, և ամեն իմաստուններուն.

Փարաւօնը պատմեց իր երազը, և ոչոք Փարաւօնի երազը մեկնող չկայր. Էն ժամանակ տակառապետը խօսեց Փարաւօնի առաջը՝ ասում է. միտս եմ բերում էսօր իմ մեղքը. Փարաւօնը բարկացաւ ինձ իր ծառային, եզի ինձ բանտը. և երազ տեսայ, և մին եբրայեցի պատանի էր էնտեղ՝ դահճապետի ծառայն, նա մեկնեց ինձ իմ երազը, և ինչպէսոր մեկնեց, նոյնպէս և հանդիպեց ինձ. Փարաւօնը զրկեց կանչեց Յովսէփին, և դուրս բերին նըրան բանտից, նըրա մազերը խուզեցին, և նըրա շորը փոխեցին, և եկաւ Փարաւօնի առաջը. Փարաւօնն ասում է Յովսէփին. երազ եմ տեսել, և ոչոք էնդու մեկնող չկայ, լսեցի քեզ համար, ասում են որ երազները լսած՝ մեկնում ես. Յովսէփը պատասխանեց Փարաւօնին՝ Զարթեաւ փարաւօն, և էր երազ, յառաւօտն խռովեցաւ անձն նորա, և առաքեաց կոչեաց զամենայն երազահանսն Եգիպտոսի, և զամենայն իմաստունսն.

Պատմեաց Փարաւօն զերազն իւր, և ոչոք էր որ մեկնէր զերազն Փարաւօնի. Յայնժամ խօսեցաւ տակառապետն առաջի Փարաւօնի՝ ասէ զյանցանս իմ յիշեցուցանեմ այսօր. Բարկացաւ Փարաւօն ինձ ծառայի իւրում, եդ զիս 'ի բանտի. և տեսի երազ, և էր անդ պատանի մի եբրայեցի՝ ծառայ դահճապետին, նա մեկնեաց ինձ զերազն իմ, և որպէս մեկնեացն՝ նոյնպէս և պատահեաց ինձ. Առաքեաց Փարաւօն, և կոչեաց զՅովսէփ և հանին զնա 'ի բանտէ, փոքրեցին զհերս նորա, և փոխեցին զպատմուճան նորա, և եկն առաջի Փարաւօնի. Ասէ Փարաւօն ցՅովսէփ. երազ տեսի, և չիք որ մեկնէ զնա, լուայ ըզքէն, ասեն՝ եթէ լսես զերազս, մեկնես.

Պատասխանի ետ Յովսէփ՝ և

բաւանին՝ ասում է . առանց Աստուած Փարաւոնին փրկութիւնի պատասխան չիլինի .

Այս Փարաւոնը պատմեց իր երազները Յովսէփին , և ասում է . թուում էր երազումը իբր կանգնած էի գետի ափը և իբրև թէ գետիցը եօթը գիրուկ և գեղեցիկ տեսնելու երինջներ էին դուրս գալիս , արածում էին , և ուրիշ էլի եօթը երինջ դուրս եկան նրանց ետնէն գետիցը ընէնց այլանդակներ և փընթիք որ չեմ տեսել բոլոր Եգիպտացոց երկրումը քանդ նրանցն էլինթիք և կերան եօթը լաւ և փնթի երինջները առաջի եօթը երինջներուն սիրուններուն և գիրուկներուն , և մոտն նրանց փորը և չերևեց թէ մտել ըլին , ընչուր նրանց երևոյթքը առաջուան պէս փնթիք էին .

Զարթեցի և յետ քնեցի , տեսայ էլի երազումս իբրև թէ եօթը հասկ էին դուրս գալիս մի տակառ վրա լիքն և գեղեցիկ , ուրիշ էլ եօթը աւերած չոռած և խորշակի խրած հասկ դուրս եկան ետնէնց մոտիկ և եօթը չրոռասէ ցՓարաւոն . առանց Աստուծոյ ոչ լինի պատասխանի փրկութեան Փարաւոնի .

Եւ պատմեաց Փարաւոն զերազն իւր Յովսէփայ , և ասէ . թուէր 'ի տեսլեան իմում եթէ կայի յեղեր գետոյ և որպէս թէ 'ի գետոյ անտի ելանէին եօթն երինջք ընտիրք մարմնովք և գեղեցիկ տեսանելով , արածէին , և այլ ևս եօթն երինջք ելանէին զկնի նոցա 'ի գետոյ անտի դժնդակք և զապիրք , որպիսի ոչ տեսի յամենայն երկրիս Եգիպտացւոց զապրագոյնս քան զնոսա և ուտէին եօթն երինջքն վա՛ռիք և զապիրք զեօթն երինջսն զառաջինս , զգեղեցիկսն և զընտիրսս , և մտանէին յորովայն նոցա և ոչ երևէին և երեսք նոցա զապիրք իբրև զառաջինն .

Զարթեայ և դարձեալ նընջեցի և տեսանէի միւսանգամ յերազի որպէս թէ եօթն հասկ ելանէին 'ի միում փնջի լիք և գեղեցիկ , և այլ եօթն հասկ ապականեալք աղաղունք և խորշակահարք ելանէին մոտաւ նոսա և կլանէին եօթն

զած և խորշակի խբած հասակերը կուլ տուին եօթը սիրուն և լիքլիք հասկերուն, և (էս երազները) պատմեցի երազահաններին, և ոչոք մեկնող չելաւ. Յովսէփն ասում է Փարաւոնին. Փարաւոնի (երկու) երազը մի բան է, ինչոր Աստուած պիտի անէ՝ նշանց է տուել Փարաւոնին. Եօթը սիրուն երինջը եօթը տարի է, և եօթը սիրուն հասկը՝ եօթը տարի է, Փարաւոնի երազը մի բան է. և եօթը զեղջ երինջը որը որ դուրս եկան նրանց ետևէն՝ եօթը տարի է, և եօթը փուճ հասկը՝ կլինի եօթը տարի սով. Հրէս եօթը տարի կգայ՝ շատ լիութիւն կը-լինի բոլոր Եգիպտացոց երկրումը, և էնդու ետևէն կգայ սովի եօթը տարին, և (առաջուան) լիութիւնը կմոռանան բոլոր Եգիպտացոց երկրումը, սովը կփչեցնէ երկիրը, և չի ճանաչուիլ լիութիւնը սովեմէն որբոր կգայ էնդու ետևէն, ընչուոր շատ սաստիկ կլինի. Այլ Փարաւոնի երազը՝ երկու անգամ կրկնելոյ մասին՝ էն է որ բանը հասկքն ազատունք և խորշակահարք զեօթն հասկան ըզ գեղեցիկս և զատոքս, և պատմեցի երազահանացքն, և ոչոք էր որ մեկնէր.

Յովսէփ ասէ ցՓարաւոն. երազն Փարաւոնի մի է, զոր ինչ Աստուած առնելոց է՝ ետցոյց Փարաւոնի.

Եօթն երինջքն գեղեցիկք՝ եօթըն ամ են, և եօթն հասկքն գեղեցիկք՝ եօթն ամ են, երազն փարաւոնի մի է, և եօթըն երինջքն տգեղք որ ելին զհետ նոցա՝ եօթն ամ են և եօթն հասկքն ոսինք՝ լիցի զեօթն ամ սով.

Ահա ամք եօթն եկեսցեն բազում լիութեան յամենայն երկիրս Եգիպտացւոց, և յետայնորիկ եկեսցէ եօթն ամ սովոյ, և մոռասցին զլիութիւնն յամենայն երկիրս Եգիպտացւոց, և սպառեսցէ սովն զերկիր, և ոչ ծանիցի լիութիւնն յերեսաց սովոյն որ գայցէ յետ այնորիկ, քանզի սաստիկ լինիցի յոյժ.

Այլ վասն կրկնելոյ երազոյն Փարաւոնի երկիցս անգամ (այնէ) զի ճշմարիտ է բանն

Աստծանէ կտրական է, և Աստուած կշտապի էնդուանելոյն.

Եւ հիմի՝ թող Փարաւոնի համար մի հասկացող և իմաստուն մարդ տեսնուի, և կացուցանէ նըրան Եգիպտացոց երկրի վըրա, և (նա) կացուցանէ Փարաւոնի համար գործակալներ երկրի վըրա, և թող ժողովեն եօթը տարուան բարելեաց ամեն կերակրերը, ցորենը թող Փարաւոնի ձեռի տակը ժողովուի, և կերակրերը քաղաքներումը պահուին, և պահած լինին սովի եօթը տարու համար որըոր կլինին, և երկիրը սովեմէն չփչուի. Էս բանը դուր] եկաւ Փարաւոնին և նըրա ամեն ծառէքանցը, և Փարաւոնն ասում է Յովսէփին. որովհետև Աստուած քեզ իմացուց էդոնք ամենը ապա քանզ քեզ էլիմաստուն մարդ չկայ, դու կլինիս իմ տան վըրա, և բոլոր իմ ժողովուրդը քո բերանին կլինի հնազանդ, այլ ես մինակ աթոռովըս կլինիմ քեզ վըրա բարձր, հրէս կացուցի քեզ էս օր Եգիպտացոց երկրի վըրա.

Յետոյ Փարաւոնը իր մատ 'ի յաստուծոյ և փութասցի Աստուած առնել զնա.

Եւ արդ՝ տես խնդրեա այր մի իմաստուն և խորհրդական Փարաւոնի, և կացուսցես ըզնա 'ի վերայ երկրին Եգիպտացւոց, և կացուսցէ գործակալս Փարաւոնի 'ի վերայ երկրիս, և ժողովեսցեն զամենայն կերակուրս զեօթն ամացն բարեաց, ցորեանն ընդ ձեռամբ Փարաւոնի ժողովեսցի, և կերակուրք 'ի քաղաքս պահեսցին և պահեալ եղիցին յեօթն ամս սովոյն որ լինիցին, և մի սատակեսցի երկիրս 'ի սովոյ. Հաճոյ թուեցաւ բանն առաջի Փարաւոնի, և ամենայն ծառայից իւրոց, և ասէ Փարաւոն ցՅովսէփ. որովհետև եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն, չիք այր իմաստնագոյն քան զքեզ դու լիցիս 'ի վերայ տան իմոյ, և բերանոյ քում հնազանդ լիցի ամենայն ժողովուրդ իմ, բայց միայն աթոռովըս 'ի վերոյ եղէց ես քան զքեզ, ահաւասիկ կացուցի ըզքեզ այսօր 'ի վերայ երկրիս Եգիպտացւոց.

Եւ հանեալ Փարաւոնի

տանիքը իր ձեռնէն հանած՝ եդի Յովսէփի ձեռին, բեհեզէ շոր հագցուց նըրան, ոսկէ վզնոց գձեց նըրա շլնքին, և վիր նստեցուց նըրան իր երկրորդ կառի վըրա, և գըզիր էր ձայն աալիս նըրա առաջը. (մեծաւորը գալիս է). Պետափրէ քրմի դուստր Ասանէթին էլ նըրան Փարաւօնը կնիկ երետ, և ասում է. ես եմ Փարաւօն, (բայց) առանց քեզ ոչոք չվիր քաշէ իր ձեռըն և ոտը բոլոր Եգիպտացոց երկրումը. Յովսէփը երեսուն տարեկան էր որ ներկայացաւ Փարաւօնի առաջը, և Փարաւօնիմէն դուրս եկած՝ մանեկաւ բոլոր Եգիպտոսի միջովը. Երկիրը լիութիւնի եօթը տարումը մեծ արդիւնք երետ, և Յովսէփը ժողովեց ամեն եօթը տարուան կերակրերը, և համբարեց քաղաքներումը, և մեծ որքանութիւն ցորեն ժողովեց ինչպէս ծովի աւազ, մինչև չէր կարում համրել, էնդուր որ թիւ չունէր.

զմատանին իւր ի ձեռանէ իւրմէ՝ եդ 'ի ձեռին Յովսէփայ, զգեցոյց նմա պատմուճան բեհեզեայ, արկ մանեակ ոսկի 'ի պարանոց նորա, և եհան զնա յերկրորդ կառս իւր. և քարոզ կարդայր առաջի նորա. Եւ ետ նմա Փարաւօն զԱսանէթ դուստր Պետափրեայ քրմի կնութեան, ասէ. ահաւասիկ ես Փարաւօն, առանց քո ոչոք համբարձցէ զձեռս իւր և զոտս իւր 'ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացւոց. Յովսէփ էր ամաց երեսնից՝ յորժամ ընծայեցաւ առաջի Փարաւօնի, և ելեալ յերեսաց Փարաւօնի՝ շրջեցաւ ընդ ամենայն Եգիպտոս.

Արար երկիրն յեօթն ամս լիութեան արդիւնս, և ժողովեաց Յովսէփ զամենայն կերակուրս ամացն եօթանց. և համբարեաց 'ի քաղաքս, և ժողովեաց զցորեան իբրև զաւազ ծովու բազում յոյժ, մինչև ոչ կարէր համարել, քանզի ոչ գոյր թիւ.

ԳԼ. ԺԲ.

Լիութիւնի եօթը տարին

Անցին եօթն ամք լիու-

անցաւ, և սկսեց գալ սո-
վի եօթը տարին, ինչպէս որ
Յովսէփն ասել էր, և սով ե-
լաւ, բոլոր ժողովուրդը ա-
ղաղակեց դէպ 'ի Փարաւոն
հացի համար, և Փարաւոնն
ասում է Եգիպտացոցը. գը-
նացէք Յովսէփի մօտ, և ինչ
որ ձեզ ասէ՝ արէք. Ապա
Յովսէփը բաց արաւ ցորենի
ամեն պահարանները, և ա-
մեն երկրներից գալիս էին
յԵգիպտոս՝ Յովսէփիմէն ցո-
րեն առնելու. Յակոբն էլ
տեսած որ ծախս կայ յԵ-
գիպտոս՝ ասում է իր որդե-
քանցը. ընչի՞ էք մնում, լը-
սում եմ որ ցորեն կայ յԵ-
գիպտոս, իջէք մեզի մի սա-
կաւ կերակուր առէք. Եւ Յով-
սէփի եղբարքիքը տասնևեան
իջան յԵգիպտոս՝ ցորեն առ-
նելու, և Բենիամինին Յով-
սէփի եղբօրը Յակոբը դուրս
չթող եղբարքանց հետ,
ընչուոր ասում էր վայթէ հիւ-
անդութիւն պատահի նրան.

Ապա եկան Իսրայէլի որ-
դիքը ուրիշ եկողգնացողների
հետ ցորեն առնելու, ընչուոր
սով էր Քանանացոց երկրումը.
Եւ երկրի հրամանատարը
թեան, և սկսան գալ եօթն
ամք սովոյն, որպէս ասաց
Յովսէփ, և եղև սով, և ա-
ղաղակեաց ամենայն ժողո-
վուրդն առ Փարաւոն վասն
հացի, և ասէ Փարաւոն ցը-
Եգիպտացիսն. երթայք առ
Յովսէփ, և զոր ինչ ասիցէ
ձեզ արասջիք. Եւ եբաց Յով-
սէփ զամենայն չոռեմարանս ցո
րենոյ և յամենայն յաշխարհաց
գային յԵգիպտոս՝ գնել ցոր-
եան 'ի Յովսէփայ.

Եւ տեսեալ Յակոբայ եթէ
գոյ վաճառ յԵգիպտոս՝ ասէ
ցորդիսն իւր. ընդէ՞ր հեղ-
գայք, լսեմ թէ գոյ ցորեան
յԵգիպտոս, իջէ՛ք գնեցէ՛ք,
մեզ սակաւ մի կերակուր.
Եւ իջին եղբարքն Յովսէփու
տասնեքին՝ գնել ցորեան յԵ-
գիպտոս, և զԲենիամին զեղ-
բայրն Յովսէփայ ոչ արձակ-
եաց Յակոբ ընդ եղբարսն,
քանզի ասէր թէ գուցէ պա-
տահիցէ նմա հիւանդութիւն.

Եւ եկին որդիք Իսրայէլի
գնել ընդ այլ երթևեկսն,
քանզի էր սով յերկրին Քա-
նանացւոց.
Եւ Յովսէփ էր իշխան եր-

Յովսէփն էր, և նա էր դուրս տալի (ցորենը) ժողովուրդին. Յովսէփի եղբարտիքը եկած՝ երկրպագեցին նըրան երեսները գետնի վըրա ցած. Յովսէփը որ տեսաւ իր եղբարտեքանցը՝ ճանաչեց նըրանցը, բայց օտարացաւ նըրանցմէն, և թնդապէս խօսեց նըրանց հետ՝ ասում է. ո՞րտեանց էք գալիս, նըրանք ասում են. Քանանացոց երկրէն՝ կերակրեր առնելու. Յովսէփը ճանաչեց իր եղբարտեքանցը, և նըրանք չճանաչեցին նըրան. Էն ժամանակ Յովսէփը միտը եբի իր տեսած երազը և ասում է նըրանցը. լրտեսներ էք դուք, և երկրիս ել և մուտը տնտղելու էք եկել.

Նըրանք ասում են. չէ տէր ծառայքդ եկել ենք կերակրեր առնելու, ամենքս մենք մի մարդու որդիք ենք, խաղաղական մարդիք ենք, լըրտեսներ չենք, տասնևերկու եղբայր ենք ծառայքդ, և պըստիկը իր հօր կշտին է էսօր, և մէկէլը էլ չկայ. Յովսէփն ասում է նըրանցը. հէնց էդ է որ ասեցի թէ լրտեսներ էք, ըրին, և նա վաճառէր ժողովրդեան.

Եկեալ եղբարքն Յովսէփայ՝ երկիրպագին նմա 'ի վերայ երեսաց խոնարհ յերկիր.

Իբրև տեես Յովսէփ զեղբարսն իւր՝ ծանեաւ զնոսա, և օտարանայր 'ի նոցանէ, և խօսեցաւ ընդ նոսա խստագոյնս ասէ. ուստի՞ գայք, նոքա ասեն յերկրէն Քանանացւոց գնել կերակուրս. Ծանեաւ Յովսէփ զեղբարսն իւր, և նոքա ոչ ծանեան զնա.

Եւ յիշեաց Յովսէփ զերազն իւր զոր տեես, և ասէ ցնոսա. լրտեսք էք դուք, և դիտել զել և զմուտ աշխարհիս եկեալ էք.

Նոքա ասեն. ո՛չ տէր ծառայք քո եկեալ եմք գնել կերակուրս, ամենեքին մեք որդիք եմք առն միոյ, արք խաղաղութեան եմք, ոչ եմք լրտեսք, երկոտասան եղբայր եմք ծառայք քո, և կրտսերն առ հօր իւրում է այսօր և միւսն չէ ի միջի. Ասէ ցնոսա Յովսէփ. այդ իսկ է զոր ասացի թէ լրտեսք

և էդով յայտ արիք, երդ-
ու�եմ Փարաւոնի արևով՝
չէք դուրս գնալ էստեանց՝
թէ ձեր փոքր եղբայրը չը-
գայ էստի, ձեզանից մի ոք-
մին ղրկէք բերէ ձեր եղբօ-
րը, և դուք կացէք մինչև ղոր-
դուին ձեր խօսքերը, և բըռ-
նեց նըրանցը երեք օր բան-
տումը. Վրաերրորդ օրը
Յովսէփն ասում է նըրանցը.
էս արէք և կենդան կմնաք,
ընչուոր ես էլ Աստծանէ եր-
կնչող եմ, թէ խաղաղական
մարդիք էք՝ մին եղբայրը ձե-
զանից թող էստեղ մնայ
բանտումը, և դուք ձեր ցո-
րենը տարէք և ձեր փոքր
եղբօրը բերէք ինձ մօտ, էն
ժամ աւատալի կլինին ձեր
խօսքերը, թէ չէ կմեռնիք.

Էնպէս արին, և ասում են
մէզկմէկին. ղարդոր մեղաւոր
ենք մեր եղբօր կողմանէ, ըն-
չուոր չմտիկ արինք նըրա ո-
գոցնեղքին, որժամոր մեզ ա-
ղաչում էր, և չլսեցինք նը-
րան, էնդուր համար եկաւ
մեզ վըրա էս նեղութիւնը.
Ռոբէնը պատասխանեց՝ ա-
սում է նըրանցը. չասեցի ձեզ.
թէ մի մեղանչէք էդ երեխայ-
էք, և դովին յայտ արարէք,
երդնում յարևն Փարաւոնի
ոչ ելանէք աստի՝ եթէ ոչ ե-
կեսցէ եղբայրն ձեր կրտսեր
այսր, առաքեցէք զմի ոք 'ի ձէնջ
և ածցէ զեղբայրն ձեր և
դուք կացէք մինչև յայտնի լի-
ցին բանք ձեր, և կալաւ ըզ
նոսա 'ի բանտի զերիս աւուր-
րաս. Յաւուրն երրորդի ասէ
ցնոսա Յովսէփ. զայս արար-
էք և ապրէք, զի և ես յԱս-
տուծոյ երկիւղած եմ, եթէ
արք խաղաղութեան էք՝ եղ-
բայր մի 'ի ձէնջ աստ մընաս-
ցէ 'ի բանտի, և դուք տա-
րայք զցորեանդ ձեր, և զեղ-
բայրն ձեր կրտսեր ածէք ա-
ռիս, և հաւատարիմ լինիցին
բանք ձեր, ապա թէ ոչ՝ մե-
ռանիք.

Ասարին այնպէս, և ասէ
իւրաքանչիւր ցեղբայր իւր.
այո՛ քանզի 'ի մեղս եմք վասն
եղբօր մերոյ, զի արհամար-
հեցաք զնեղութիւն ոգւոց նո-
րա, յորժամ աղաչէրն զմեզ,
և ոչ լուաք նմա, վասն այնո-
րիկ եկն 'ի վերայ մեր այս նե-
ղութիւն. Պատասխանի ետ
Ռոբէն՝ և ասէ ցնոսա. ոչ ա-
սացի ցձեզ, թէ մի մեղանչէք

ին, և չլսեցիք ինձ, և հրէս՝ նրբա արիւնն է պահանջուում. Եւ նրբանք չգիտէին որ Յովսէփն իմանում էր, էնդուրոր թարգմանով էր նրբանց հետ (խօսում). Եւ մի կուռը քաշուած նրբանցմէն՝ Յովսէփը լաց ելաւ, իժում եկաւ նրբանց մօտ, վեր առաւ նրբանցից Շմաւոնին, կապեց նրբանց առջևը. Եւ հրաման երետ Յովսէփը լցնել նրբանց ամանները ցորենով, և դնել արծաթը ամենինն իր քրձումը, և նրբանցը պաշար տալ ճանապարհի, և նրբանք բարձած գնացին. Մինը որ իր քուրձը յետ արաւ կերակուր տալու իր աւանակին, տեսաւ իր արծաթի ծրարը իր քրձի բերանին, ասում է եղբարտեքանցը էս յետ է տուուել ինձ արծաթը և հրէս իմ քրձումն է, խէլքէն ելան նրբանք, ահ ընկան իրարով և ասում են, էս ինչ բան արաւ մեզ Աստուած.

Ապա եկան իրանց հայր Յակոբի մօտ Քանանու երկիր, և պատմեցին նրբան ամեն ինչոր պատահեց նրբանցը, ասում են երկրի հրամանատամանկանդ, և ոչ լուարուք ինձ, և ահա՝ արիւն նորա խնդրի. Եւ նոքա ոչ գիտէին թէ լսէր Յովսէփ, զի թարգման կայր 'ի միջի.

Եւ անցեալ մեկուսի 'ի նոցանէ՝ ելաց Յովսէփ, և եկն առ նոսա, առ 'ի նոցանէ զՇմաւոն, կապեաց առաջի նոցա. Եւ ետ հրաման Յովսէփ լընուլ զամանս նոցա ցորենով և դնել զարծաթն իւրաքանչիւր 'ի քրձի իւրում, և տալ նոցա պաշար 'ի ճանապարհ, և նոցա բարձեալ գնացին. և լուծեալ միոյ զքուրձ իւր տալ կերակուր դրաստու իւրում՝ ետես զծրար արծաթոյն իւրոյ 'ի բերան քրձի իւրոյ, ասէ ցեղբարսն. դարձուցաւ ինձ այսրէն արծաթն և ահա կայ 'ի քրձի իմում, զարմացան միտք նոցա, խռովեցան ընդ միմեանս և ասեն. զինչէ այս զոր արար ընդ մեզ Աստուած.

Եւ եկին առ Յակոբ հայրն իւրեանց յերկիրն Քանանու, և պատմեցին նմա զամենայն ինչ որ անց ընդ նոսա՝ ասեն. խօսեցաւ տէր երկրին

ը խօսեց մեզ հետ թնդա-
պէս, և եղի մեզ բանտը լը-
տեսների պէս, մենք ասեցինք
նրրան. խաղաղական մարդիք
ենք. նա մեզ ասեց. էստով
կգիտենամ որ խաղաղական
մարդիք էք, թէ ձեր մին եղ-
բօրը էստեղ մօտս կթողնէք,
և ձեր փոքր եղբօրը կբերէք
ինձ մօտ. Եւ նրրանք որ դար
տակում էին իրանց քրձերը՝
ամեն ոքմնու արծաթի ծրարը
իրանց քրձերումն էր, որ տե-
սան իրանք և իրանց հայրը
շատ երկնչեցին. Եւ Յակոբն
իրանց հայրը ասում է նրրան-
ցը. Ինձ անորդի արիք, Յով-
սէփը էլ չկայ, Շմաւոնը էլ
չկայ, Բենիամինին էլ էք տա-
նում, ինձ վրրա եկաւ դիվ
էստոնք, իմ որդին չի իջնի ձեզ
հետ, ընչուոր սրրա եղբայրը
մեռաւ, մինակ սա է մնա-
ցել, սրրան հիւանդութիւն
կպատահի ճանապարհին, և
իմ ծերութիւնը տրտմութիւնով
կդէվէր տանէք գերեզմանը.

ընդ մեզ խստագոյնս, և եղ
զմեզ 'ի բանտի իբրև զլրտե-
սըս, մեք ասացաք ցնա. արք
խաղաղութեան եմք, նա ա-
սաց ցմեզ. այսու գիտացիս
թէ արք խաղաղութեան էք,
եթէ զեղբայր մի ձեր աստ
առիս թողուցուք, և զեղբայ-
րըն ձեր կրտսեր ածիցէք ա-
առիս. Եւ 'ի թափելն նոցա ըզ
քուրձս իւրեանց, կայր իւ-
րաքանչիւր ուրուք ծրար ար-
ծաթոյ 'ի քրձի իւրում. իբրև
տեսին ինքեանք և հայրըն իւր-
եանց երկեան յոյժ. Եւ
ասէ ցնոսա Յակոբ հայրն
իւրեանց. զիս անորդի արա-
րէք, Յովսէփ չէ 'ի միջի, Շը-
մաւոն չէ 'ի միջի, և զԲենի-
ամին ևս առնուցուք յիմ վե-
րայ եկն այս ամենայն. ոչ իջա-
նէ որդի իմ ընդ ձեզ, զի եղ-
բայր սորա մեռաւ, սա միայն
մնացեալ է, դէպ լինիցի սմա
հիւանդանալ 'ի ճանապարհին,
և իջուցանիցէք զծերութիւնս
իմ տրտմութեամբ 'ի դժոխս.

ԳԼ. ԺԳ.

Որ կերան պրծան բերած
ցորենը՝ նրրանցն իրանց հայ-
ըն ասում է. էլի գնացէք մի

Իբրև սպառեցին ուտել ըզ
ցորեանն զոր բերին՝ ասէ ցը-
նոսա հայրն իւրեանց. դարձ-

սակաւ կերակուր առէք.
Յուդան խօսեց նըրա հետ, ասում է · դիմադրեց մեզ էն մարդը՝ ասում է · չտեսնէք իմ երեսը, թէ ձեր փոքր եղբայրը չլինի ձեզ հետ, հիմի՝ թէ կթողնես մեր եղբօրը մեզ հետ՝ կիջնինք և կերակրեր կը առնենք, թէ չէ՝ չենք երթալ.

Իսրայէլն ասում է · ինչ փաթերակ բերիք վրէս՝ որ իմաց արիք էն մարդուն թէ. դուք եղբայր ունիք. Նըրանք ասում են. էն մարդը մանրամասն հարցուց մեզանէ, մեր ազգականութենէ, և թէ կենդանի է էլի ձեր հայրը, և թէ եղբայր ունիք, և իմաց արինք նըրան նըրա հարցնելովը · միթէ գիտէինք որ ասելու է մեզ՝ բերէք ձեր եղբօրը · Յուդան ասում է իր հայր Իսրայէլին · ինձ հետ թող էդ պատանեակին, և վեր կենանք գնանք, ես դըրա երաշխաւոր, ինձմէն ուզե դըրան.

Իսրայէլն ասում է նըրանցը · թէ էդպէս է՝ արէք էդ, վեր առէք էս երկրի արմաղաններից ձեր ամաններու-

եալ երթայք գնեցէք սակաւ մի կերակուր · Խօսեցաւ ընդ նմա Յուդա՝ և ասէ · վկայութիւն եդ ընդ մեզ այրն՝ ասէ մի տեսանիցէք զերեսս իմ, եթէ ոչ եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ իցէ, արդ՝ եթէ արձակես զեղբայրդ մեր ընդ մեզ՝ իջցուք և գնեսցուք կերակուրս, եթէ ոչ՝ ոչ երթիցուք. Ասէ Իսրայէլ · զինչ չարիս հասուցէք 'ի վերայ իմ՝ զի պատմեցէք առնն թէ գուցէ ձեր եղբայր · Նոքա ասեն · հարցանելով եհարց զմէնջ այրըն, զազգէ մերմէ, և թէ տակաւին կենդանի՞ իցէ հայրըն ձեր, և եթէ իցէ՞ ձեր եղբայր, և պատմեցաք նմա ըստ հարցանելոյն նորա, մի՞թէ գիտէաք թէ ասելոց է ցըմեզ՝ ածէք զեղբայրն ձեր. Ասէ Յուդայ ցԻսրայէլ հայրն իւր · արձակեա՛ ընդիս զպատանեակդ և յարուցեալ գընասցուք, ես առնում զդա յերաշխի, 'ի ձեռաց իմոց խընդրեսջիր զդա.

Ասէ ցնոսա Իսրայէլ · եթէ այդպէս իցէ՝ արարէք զայդ, առէք 'ի պտղոյ երկրիս յամանսս ձեր, և տարայք առ-

մը, ընծայք տարէք էն մարդու համար. ռետին, մեղր խունկ; ընկուզ և արծաթը երկուպատիկ վեր առէք, յետ տարէք ձեզ հետ արծաթը որ որ ձեր ամաններուն էր յետ եկած, կըլի էս սխալմունքով ելաւ, ձեր եղբօրն էլ վեր առէք, և իմ Աստուածը ձեզ շնորհ տայ էն մարդու առաջը, և վիր թողնէ ձեզ հետ ձեր միւս եղբօրը, և Բենիամինին, այլ ես (թէ) ինչպէս անորդիացայ անորդիացայ. Ապա ընծայքը, երկպատիկ արծաթը և Բենիամինին վեր առած՝ իջան յԵգիպտոս, և ներկայացան Յովսէփի առաջը. Յովսէփը որ տեսաւ նրանցն և իր եղբայր Բենիամինին՝ ասում է իր տան վերակացուին. տար էդ մարդեքանցը տուն, և ինչ մորթելու կայ մորթե, և հադրե, ընչուոր էդ մարդիքը ինձ հետ պիտի (հաց) ուտեն կէսօրին.

Մարդը տարաւ նրանցը և նրանք երկնչած ասում են. արծաթի պատճառով ենք՝ որ որ առաջի անգամն յետ եկաւ մեր ամաններումը՝ տուն տանում, մեզ հարցուփորձ նրն պատարագս. ռետին, մեղրը, խունկ, ընկոյզ և արծաթ կրկին առէք, զարծաթն որ դարձաւ յամանս ձեր տարայք ընդ ձեզ, գուցէ ընդ խաբբս ինչ իցէ, և զեղբայրդ ձեր առէք, և Աստուած իմ ասցէ ձեզ շնորհս առաջի առնրն, և արձակեսցէ ընդ ձեզ զեղբայրն ձեր զմիւս, և զՌենիամին, բայց ես որպէս անզաւակեցայ անզաւակեցայ.

Եւ առեալ զպատարագսն, զարծաթ կրկին և զՌենիամին իջին յԵգիպտոս, և կացին յանդիման Յովսէփայ.

Իբրև ետես զնոսա Յովսէփ և զՌենիամին եղբայր իւր՝ ասէ ցվերակացու տան իւրոյ. տար զարսդ 'ի տուն, և զէն զենլիս, և պատրաստեա, զի ընդիս ուտելոց են արքդ այդոքիկ 'ի միջօրէի.

Տարաւ զնոսա այրն, և նոքա երկուցեալ ասեն. վասն արծաթոյն որ դարձաւ յամանս մեր զառաջինն՝ մտանեմք առ 'ի խուզելոյ զմեզ, արկանել 'ի վերայ մեր, և առնուլ

անելոյ համար, մեզ վերա (մեզ) գձելու, և մեզ ծառայք վեր առնելու, և մեր իշանները (խլելու)։ Ապա ասում են մարդուն, Յովսէփի տան վերակացուին։ Չգիտենք ով եդի արծաթը մեր ամաններումը, յետ ենք բերել էն, և հերիս մեր ձեռին է, և ուրիշ արծաթ ենք բերել հետներս կերակրեր առնելու։ Ասում է ներանցը. խաղաղութիւն (է) ձեզ հետ, մի երկնչիք, ես ձեր արծաթը ստացել եմ, և բաւական եմ։ Իժում դուրս եբի ներանց մօտ Շմաւոնին։ Եւ էն մարդը տարաւ ներանցը ներս Յովսէփի տուն, և ջուր բերին ներանց ոտները լուանալու, ներանց աւանակներին էլ կերակուր երետ։

Յովսէփը տուն եկաւ, և (եղբարտիքը) մօտ տարան ներան ընծայքը որնոր իրանց ձեռին ունէին և երկրպագեցին ներան երեսները գետնի վերա դրած։ Հարցուց ներանցը՝ ասում է. ո՞նց էք, առո՞ղջ է ձեր ծեր հայրը որի համար որ ասեցիք թէ դեռ էլի կենդան է։ Ներանք ասում են. առողջ է ծառայդ մեր զմեզ 'ի ծառայս, և զէջս մեր

Եւ ասեն ցայրն, ցվերակացու տանն Յովսէփայ։ ոչ գիտեմք ով եդ զարծաթն յամանս մեր, դարձուցաք զայն, և ուսասիկ 'ի ձեռին մերում է, այլ արծաթ բերաք ընդ մեզ գնել կերակուրս։

Ասէ ցնոսա։ Խաղաղութիւն ընդ ձեզ, մի երկնչիք, իմ զձեր արծաթն առեալ, և հաճեալ եմ։ և եհան առ նոսա զՇմաւոն։ Եւ տարաւ զնոսա այրն 'ի ներքս 'ի տուն Յովսէփայ, և բերին ջուր լուանալ զոտս նոցա, և ետ կերակուր դրասուց նոցա։

Եմուտ Յովսէփ 'ի տուն և մատուցին նմա զընծայսն զոր ունէին 'ի ձեռս իւրեանց և երկիրպագին նմա 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր։

Եհարց զնոսա՝ ասէ. զիարդ կայք, ողջ իցէ հայրն ձեր ծերունի զորմէ ասացէք թէ տակաւին կենդանի է։

Նոքա ասեն. ողջ է ծառայքս հայր մեր։

հայրը. (Յովսէփն) ասում է. օրհնեալ է էն մարդը Աստուծանէ և (նրբանք) կռացան երկրպագեցին նրան. Յովսէփը վերբաշեց իր աչքերը, և տեսաւ Բենիամինին իր մօրով մէկ եղբօրը, և ասում է. դա՞ է ձեր փոքր եղբայրը, Աստուած ողորմայ քեզ որդեակ. Յովսէփը այրայլուեց և նրբա աղքները հուպ էին գալիս իր եղբօր վրա, և ուզում էր լացնիլ, սենեակը մտած՝ լաց ելաւ, իժում երեսը լուացած դուրս եկաւ, պնդեց ինքն իրան, և ասում է. հաց գձէք.

Գձեցին նրբա համար առանձին, և նրբանց համար ամենին մէմէկ, նստեց նրբա առաջը երեցը՝ ըստ իր երիցութիւնին, և փոքրը՝ ըստ իր փոքրութիւնին, և արմացել էին (էն) մարդիքը իրար վրա. Իրանցը բաժիններ առան նրբամէն, և Բենիամինի բաժինը քանզ ամենեքանց բաժինները մեծ ելաւ հնգապատիկ քանզ նրբանցը, խմեցին և զուարճացան նրբա հետ.

Յետոյ Յովսէփը հրամայեց իր վերակացուին՝ ասում է. լցէք էն մարդեքանց ամանները օրհնեալ է այրն այն յԱստուծոյ և խոնարհեցան երկիրպագին նմա.

Ամբարձ Յովսէփ զաչս իւր, և տես զԲենիամին զեղբայր իւր զհամամայր, և ասէ. այդ է եղբայրն ձեր կրտսեր, Աստուած ողորմեսցի քեզ որդեակ. Խռովեցաւ Յովսէփ և գալարէին աղիք նորա 'ի վերայ եղբօրն իւրոյ և խընդրէր լալ, մտեալ 'ի սենեակ՝ ելաց. և լուացեալ զերեսս իւր ել, պնդեաց զանձն, և ասէ. արկէք հաց.

Արկին նմա միայնոյ, և նոցա իւրաքանչիւր ումեք, նրբատաւ առաջի նորա երեցն՝ ըստ երիցութեան իւրում, և կրտսերն՝ ըստ կրտսերութեան իւրում և զարմացեալ էին արքն իւրաքանչիւր ընդ եղբօր իւրում. Առին իւրեանց մասունս 'ի նմանէ, և մեծացաւ մասն Բենիամինի քան զմասունս ամենեցուն հինգապատիկ քան զնոցայն, արբին և արբեցան ընդ նմա. Եւ հրաման ետ Յովսէփ հաղարապետին իւրում՝ ասէ. լցէք զամանս արանցն կերակրով որչափ և

ները կերակրով որչափ էլ կա-
րենան վերցնել, և դրէք ա-
րծաթը ամենն իր ամանի բե-
ռանին, և իմ արծաթէ սկին
դրէք փոքրի ամանումը իր
ցորենի գնի հետ· Եւ առաւօ-
տը ճանպհու դրուեցին էն մար
դիքը, քաղաքէն դուրս ելան·
Դեռ չէին հեռացել որ Յով-
սէփն ասում է իր վերակա-
ցուին· վեր կաց եանէն լեր
էն մարդեքանցը և կհասնես
նըրանցը, կասես. ինչ է որ բա-
րու փոխանակ չար հատու-
ցիք, ընչի՞ գողացաք արծա-
թէ սըկին որովոր իմ տէ-
րը խմում էր·

(Վերակացուն) նըրանցը սր
գտաւ էնպէս ասեց, և նը-
ռանք ասում են նըրան· Ա-
տուած մի արասցէ ծառէ-
քանցդ էդպէս բան անել, որ
եթէ արծաթը որնոր գտանք
մեր ամաններումը՝ յետ դար-
ձուցինք ձեզ մօտ Քանանա-
ցոց երկրէն, ինչ կգողանայ-
ինք տեառնիդ տանէն ար-
ծաթ կամ ոսկի· ում մօտ որ
ծառէքանցիցդ սկին գտնուի
թող մեռնի, մենք էլ մեր տե-
առնի ծառայք լինինք· Ա-
սում է· էդպէս լինի ինչ-
կարիցեն բառնալ, և դիք
զարծաթն իւրաքանչիւր 'ի բե-
ռան ամանոյ իւրոյ և զսկի-
հըն իմ արծաթի դիջիք յա-
մանի կրտսերոյն և զգինս ցո-
ռենոյ նորա· Եւ ընդ առաւօ-
տըն արձակեցան արքն, ելին
ըստ քաղաքն·

Եւ չէին մեկնեալ 'ի բաց՝ ասէ
Յովսէփ ցհազարապետն իւր·
արի՞ պնդեաց զհետ արանցն,
և հասցես նոցա, և ասասցես.
զի՞ է զի հատուցէք չար փո-
խանակ բարեաց, ընդէ՞ր գո-
ղացաք զսկիհն արծաթի որով
ըմպէր տէրն իմ·

Իբրև եգիտ զնոսա ասաց
ցնոսա այնպէս, և նոքա ա-
սեն ցնա· Քաւ լիցի ծառայ-
ից քոց առնել ըստ բանիդ
այդմիկ, զի եթէ զարծաթն
զոր գտաք յամանս մեր՝ դար-
ձուցաք առ ձեզ յերկրէն Քա-
նանացւոց զի՞արդ գողանայաք
'ի տանէ տեառն քոյ ար-
ծաթ կամ ոսկի առ որում
գտցի 'ի ծառայից քոց սկիհն,
մեռցի, և մեք եղիցուք ծայ-
ռայք տեառն մերում·
Նա ասէ· այդպէս եղիցի որ-
պէս ասացէքդ·

պէս որ ասեցիք։ Եւ Իսկոյն վէրբերին ամենն իր բեռը գետնին, և բաց արին ամենն իր ամանը, և պառաեց մեծիմէն սկսած մինչև փոքրը, և սկին գտաւ Բենիամինի ամանումը։ Իսկոյն պատառեցին իրանց շորերը, և դրին ամենըն իր բեռը իր էշի վրա, և դարձան քաղաք։ Յուդան մտաւ, հետն իր եղբարտիքը Յովսէփի մօտ, և ընկաւ նըրա առաջը գետնի վրա։ Յովսէփն ասում է։ էդ ինչ բանէ որ արիք։

Յուդան ասում է։ ինչ պատասխան տանք, կամ ինչպէս խօսինք, Աստուած գտաւ քո ծառէքանց յանցանքը, հըրէս մենք կանք մեր տեառնին ծառայք, մենք էլ, (նա) էլ ում մօտ որ սկին գտնուեց։ Յովսէփն ասում է։ Աստուած մի արասցէ ինձ էդ բանըն անել, մարդը ում մօտ որ սկին գտնուեց՝ ինքը կըլինի իմ ծառայ, և դուք յետ գնացէք ողջապէս ձեր հօր մօտ։ Յուդան մօտ գնաց նըրան՝ և ասում է։ տէր խնդրեմ թող ծառայդ մի խօսք ասէ քո առաջը, չբարկանաս ծառայիդ

Եւ փութացան իջուցին զբեռըն իւրաքանչիւր 'ի գետին, և բացին իւրաքանչիւր զամանն իւր, և յուզեաց սկսեալ յերիցուէն մինչև ցկրտսերն, և եգիտ զսկիհն յամանի Բենիամինի։ Եւ պատառեցին ըզ հանդերձս իւրեանց, և եդին իւրաքանչիւր զբեռն իւր 'ի վերայ իշոյ իւրոյ, և դարձան 'ի քաղաք։ Եմուտ Յուդայ և եղբարք իւր առ Յովսէփ, և անկաւ առաջի նորա 'ի վերայ երկրի։ Ասէ ցնոսա Յովսէփ զինչ են իքրդ զոր արարէք։

Յուդայ։ ասէ զինչ տացուք պատասխանի, կամ զինչ խօսիցիմք, եգիտ Աստուած ըզ յանցանս ծառայից քոց, աւասիկ կամք ծառայք տեառն մերոյ, և մեք և առ որում և սկիհն գտաւ

Յովսէփ ասէ։ քաւ լիցի ինձ առնել զբանդ զայդ, այրն առ որում սկիհն գտաւ՝ նա եղիցի իմ ծառայ, և դուք ելէք ողջութեամբ առ հայրն ձեր։

Մատեաւ առ նա Յուդայ՝ և ասէ։ աղաչեմ տէր, խօսեսցի ծառայ քո բան մի առաջի քոյ մի բարկասցիս ծառայի քում։

ընչուոր Փարաւօնի ետնէն դու
ես տէրը. Դու մեզ հարցու-
ցեր՝ և ասեցեր. դուք հայր
կամ եղբայր ունիք, և մենք
ասեցինք. մենք ծերացած հայր
ունինք, և մին երեխայ նըրա
ծերութիւնին ելած փոքր որ-
դի, որիոր եղբայրը մեռաւ,
և մինակ նա է մնացել իր
մօրմէն, և հայրը սիրում է նը-
րան. Ասեցեր մեզ. բերէք
նըրան ինձ մօտ, և խնամք
կանեմ նըրան. Ասեցինք. չի
կարալ երեխայն թողնել իր
հօրը, թէ թողնէ՝ (հայրը) կը-
մեռնի, և դու մեզ ասեցեր. թէ
չիջնի ձեր փոքր եղբայրը ձեզ
հետ՝ էլ չտեսնէք իմ երեսը.

Մենք որ յետ գնացինք մեր
հօր մօտ՝ իմաց արինք նըրան
մեր տեառնի խօսքերը. Յե-
տոյ մեր հայրը ասում է. գը-
նացէք էլի մի սակաւ կերա-
կուր առէք, և մենք ասեցինք՝
որ չենք կարալ իջնել էնտի՝
թէ մեր փոքր եղբայրը չըիջ-
նի մեզ հետ, ընչուոր չենք
կարալ տեսնել էն մարդու ե-
րեսը, թէ մեր փոքր եղբայ-
րը մեզ յետ չլինի. Եւ մեր
հայրը մեզ ասում է. դուք ին-
քներդ գիտէք՝ որ իմ կնի-

զի դու ես յետ Փարաւօնի
տէր. Դու հարցեր ցմեզ՝ և
ասացեր. կայցէ՞ ձեր հայր կամ
եղբայր, և մեք ասացաք. կայ
մեր հայր ծերացեալ, և մա-
նուկ մի կրտսեր որդի ծե-
րութեան նորա, եղբայր նո-
րա մեռաւ, և նա միայն մնաց
մօր իւրոյ. և հայրն սիրէ զնա.

Ասացեր ցմեզ. իջուցէք ըզ
նա առիս, և խնամարկեցից
նմա. Ասացաք. ոչ կարէ մա-
նուկն թողուլ զհայր իւր, եթէ
թողուցու՝ մեռանիցի, և դու
ասացեր ցմեզ. եթէ ոչ իջանիցէ
եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ
մի և ես տեսանիցէք զերեսս իմ.

Իբրև ելաք մեք առ հայր
մեր՝ պատմեցաք նմա զբանս
տեառն մերոյ. Եւ ասէ հայ-
րըն մեր. երթայք դարձեալ
գնեցէք սակաւ մի կերակուր,
և մեք ասացաք՝ եթէ ոչ կա-
րեմք իջանել անդր, եթէ ոչ
եղբայրդ մեր կրտսեր իջանի-
ցէ ընդ մեզ, զի ոչ կարեմք
տեսանել զերեսս առնն, եթէ
եղբայրդ մեր կրտսեր ընդ մեզ
ոչ իցէ. Եւ ասէ ցմեզ հայր
մեր. դուք ինքնին գիտէք զի
երկուս ծնաւ ինձ կին իմ,

կը ինձ երկու որդի եբի, մինը՝ դուրս գնաց ինձմէն և ասեցիք թէ գազանակեր ելաւ, և էլ չեմ տեսնում նրրան մինչի հիմի, հիմի թէ սրրան էլ վեր կալնէք առջևէս, և սրրան հիւանդութիւն պատահի ճանապարհին, իմ ծերութիւնը տրտմութիւնով կդէվէր տանէք գերեզմանը. Այժմ՝ եթէ երթանք քո ծառայ մեր հօր մօտ՝ և էս պատանեակը չլինի մեզ հետ, նրրա հոգին սրրա հոգու վրրա է կախուած, և հէնցոր չտեսնէ մեզ հետ էդ երեխին՝ կմեռնի, և մեր հօր ծերութիւնը կսկծով կդէվէր տանենք գերեզմանը.

Եւ էլ ես՝ երաշխով վերառած էդ երեխին իր հօրմէն, ասել եմ (հօրը). թէ չյետ բերեմ դրրան քեզ մօտ՝ և չը-կանգնեցնեմ քո առաջը՝ յաւիտեան պատժաւոր կլինիմ իմ հօր մօտ. Ապա՝ թող էդ երեխի փոխանակ ես քեզ ճորտ կենամ, և թող դա յետ գընայ իր եղբարտեքանց հետ. Ո՞նց յետ գնամ իմ հօր մօտ, թէ էդ պատանեակը չլինի մեզ հետ. Ո՛հ չտեսնեմ իմ հօր կսկիծը. Էլ չկարաց Յովսէ-մին՝ ել յինէն և ասացէք թէ գազանակուր եղև, և ոչ ես տեսանեմ զնա մինչև ցայժմ, արդ՝ եթէ զսա ես առնուցուք յերեսաց իմոց, և պատահիցէ սմա հիւանդութիւն 'ի ճանապարհի. իջուցանէք զզ ծերութիւնս իմ տրտմութեամբ հանդերձ 'ի դժոխս.

Եւ արդ՝ եթէ երթայցեմք առ ծառայ քո հայր մեր՝ և պատանեակս չիցէ ընդ մեզ. նորա ոգին կախեալ կայ զդորա ոգւոյդ, և իբրև ոչ տեսանիցէ ընդ մեզ զմանուկդ՝ մեռանիցի, և իջուցանիցեմք զծերութիւն հօր մերոյ չարչարանօք հանդերձ 'ի գերեզման.

Եւ իմ առեալ յերաշխի զմանուկդ 'ի հօրէ իւրմէ՝ ասեմ. եթէ ոչ ածիցս զդա առքեզ՝ և կացուցից առաջի քո՝ յանցաւոր եղէց առ հայրն իմ զամենայն աւուրս.

Եւ արդ՝ կացից ես փոխանակ մանկանդ ստրուկ քեզ, և ելցէ դա ընդ եղբարս իւր.

Զիարդ ելանիցեմ առ հայրն իմ, եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ. Զի մի տեսից զչարիսն որ գտանիցեն զհայ-

վը ժուժ անել ամեն իրա շուրջ կացողների առաջը՝ ասում է, դուրս տարէք կշտեմէս ամենեքանցը, և էլ ոքմին չկայր էնտեղ նըրա կշտին, որժամը ճանաչում երեսա իր եղբարտեքանցը. Եւ լացով ձայնը վեր քաշած՝ ասում է նըրանցը. ես Յովսէփն եմ, ողորդ էլի կենդանի է իմ հայրը, և նըրա եղբարտիքը չէին կարում նըրան պատասխան տալ, ընչուոր այլայլուեցին նըրա դիմացէն. Յովսէփն ասում է իր եղբարտեքանցը. մոտ եկէք ինձ, ես ձեր եղբայր Յովսէփն եմ որինոր դուք ծախեցիք դէպի Եգիպտոս, բայց իսկի մի տրտմիք, և խիստ չթուայ ձեզ որ ծախեցիք ինձ էսդէնը, որովհետև Աստուած ինձ փրկութենի ղրկեց ձեր առաջը, ընչուոր հրէս սովի երկրորդ տարին է, և ուրիշ էլի հինգ տարի ոչ վար կլինի, և ոչ հունձ, և Աստուած ղրկեց ինձ ձեր առաջը ձեզի զաւակ թողնելոյ համար դետնքի վըրա, և ձեր մեծ մնացորդները կերակրելու. Այժմ՝ չէ թէ դուք ղրկեցիք ինձ էսդէնը, այլ Աստուած, և տրաւ ինձ հայր Փարաւոնի հարըն իմ. Եւ ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել առաջի ամենեցուն որ շուրջ զնովաւ կային՝ ասէ. հանէք զամենեսին արտաքս յինէն, և չկայր էս ոք անդ առ նմա, յորժամ ետ ծանօթս եղբարց իւրոց. Եւ ձայն բարձեալ լալով ասէ ցընոսա. ես եմ Յովսէփ, արդարև տակաւին կենդանի է հայր իմ, և ոչ կարէին եղբարք նորա տալ նմա պատասխանի, զի խռովեցան յերեսաց նորա. Ասէ Յովսէփ ցեղբարսն իւր. մոտ եկայք առիս, ես եմ Յովսէփ եղբայրն ձեր զոր դուք վաճառեցէք յԵգիպտոս, բայց մի ինչ տրտմիք և մի խիստ թուեսցի ձեզ զի վաճառեցէք զիս այսր, քանզի ի փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի ձեր, զի այս երկրորդ ամ է սովոյս, և զայլ էս հինգ ամ ոչ լինիցի վար, և ոչ հունձ, և զիս առաքեաց Աստուած առաջի ձեր առ ի թողլոյ ձեզ զաւակ յերկրի և կերակրել զձեր մնացորդս մեծամեծս.

Եւ արդ՝ ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աստուած, և արար զիս հայր

մար և բոլոր նոցա տան տէր, և բոլոր Եգիպտացոց երկրի հրամանատար. Հիմի՝ չուտ ուրէք ելէք իմ հօր մօտ և ասէք նոցան. Էսպէս է ասում քո որդի Յովսէփը. Աստուած ինձ բոլոր Եգիպտացոց երկրի տէր է արել, ապա՝ արի ինձ մօտ, էլ մի մնար, և կշտիս կլինիս, դու, որդիքդ, որդեքանց որդիքդ, ոչխարդ, տավարդ, և ինչոր քոնն է, և կրկերակրեմ քեզ էս տեղ, ընչուսոր ուրիշ էլի հինգ տարի կայ սովինը.

Հրէս աչքներդ տեսնում են, որ իմ բերանն է խօսում ձեզ հետ, հիմի՝ իմոց արէք իմ հօրը ամեն ինչ իմ փառքն է Եգիպտոսումը, և ինչքան որ տեսնում էք դուք, և չուտ իջուցէք իմ հօրը էստի, և ընկաւ իր եղբայր Բենիամինի չնքի վրա, լաց եւաւ, Բենիամինն էլ նրա չնքի վրա՝ լաց եւաւ, իժում պաշեց իր ամեն եղբարտեքանցը, և լաց եւաւ նրանց վրա. Այնու յետոյ նրա եղբարտիքը խօսեցին նրա հետ. Իսկոյն վեր եւաւ ձայնը Փարաւոնի տուն, և ասում են. Փարաւոնի, և տէր ամենայն տան նորա, և իշխան ամենայն երկրիս Եգիպտացոց. Արդ՝ փութացեալ ելէք առ հայրն իմ և ասացէք ցնա. այսպէս ասէ որդին քո Յովսէփ. աստուած զիս Աստուած տէր ամենայն երկրիս Եգիպտացոց, արդ՝ եկ էջ առիս, և մի հեղգար, և եղիցես մօտ առիս դու և որդիք քո և որդիք որդւոց քոց, ոչխար քո և արջառ քո և որինչ քոյ իցէ. և կերակրեցից զքեզ ասա, զի այլ ևս հինգ ամ կայ սովոյս.

Ահաւասիկ աչք ձեր տեսանեն, զի բերան իմ խօսի ընդ ձեզ, արդ՝ պատմեցէք հօր իմոյ զամենայն զփառս իմ որ են յԵգիպտոս, և որչափ ինչ տեսանէք դուք, և փութացեալ իջուցէք զհայրն իմ այսր, և անկաւ 'ի վերայ պարանոցի Բենիամինի եղբօր իւրոյ ելաց և Բենիամին ելաց 'ի վերայ պարանոցի նորա, և համբուրեաց զամենայն եղբարս իւր, և ելաց 'ի վերայ նոցա. Յետ այնորիկ խօսեցան եղբարքն նորա ընդ նմա. Եւ հնչեաց համբաւն 'ի տուն Փարաւոնի և ասեն. եկին

Յովսէփի եղբարտիքը եկել են. Փարաւօնն և նրրա ծառայքը ուրախացան. Փարաւօնն ասում է Յովսէփին. ասա եղբարտեքանցդ. լցէք ձեր բեռները և գնացէք վեր առէք ձեր հօրը և ձեր դաղածքը եկէք ինձ մօտ, և կըտամ ձեզ Եգիպտացոց ամենն բարութիւններից, և կուտէք էս երկրի ղուղը, և էս հրամանը տուր. ասելեր վեր առէք երկրիցս ձեր երեխանց և կնկանց համար, և ձեր հօրը վեր առած բերէք, և ձեր աչքը մնկած չմնայ ձեր կահի վրրա, ընչուոր բոլոր Եգիպտացոց երկրի բարութիւնը ձեզ կլինի.

Էնպէս արին Իսրայէլի որդիքը, և Յովսէփն երեսի նրրանցը ասելեր, և ճանապարհի պաշար, և ամենեքանցն երեսի փոխնորդ կապայք, և Բենիամինին հինգ կապայ երեսի, իր հօր համար էլ նոյնպէս երեսի տանել, հետը տասն իշի բեռը ամեն բարութիւններից և տասը ջորի բարձած հաց և կերակուր իր հօր համար ճանապարհի. Եւ գնացին իրանց հայր Յակոբի մօտ, և իմաց արին նրրան՝ ասում են. եղբարք Յովսէփու. Ուրախ եղեն Փարաւօն և ծառայք նորա. Ասէ Փարաւօն ցՅովսէփ. ասա ցեղբարս քո. լցէք զբեռինս ձեր, և երթայք, առէք զհայր ձեր, և ըղստացուածս ձեր, եկեսջիք առիս, և տաց ձեզ յամենայն բարութեանցս Եգիպտացւոց, և կերիջիք զուղիւղ երկրիս, և տուր զայս հրաման. առէք յերկրէս սայլս մանկանց և կանանց ձերոց, և առեալ զհայրն ձեր ածիցէք, և մի ագահիցեն աչք ձեր 'ի կահ ձեր, զի բարութիւն ամենայն երկրիս Եգիպտացւոց ձեզ լիցի.

Արարին այնպէս որդիքն Իսրայէլի, և ետ նոցա Յովսէփ սայլս և պաշար 'ի ճանապարհ, և ամենեցուն ետ կրկին պատմուճան, և Բենիամինի ետ հինգ պատմուճանս, և հօրն իւրում ետ տանել նոյնպէս, և տասն իշոյ բեռինս յամենայն բարութեանց, և տասն ջորինպարակուսր և կերակուր հօրն իւրում 'ի ճանապարհ. Եւ չոգան առ Յակոբ հայրն իւրեանց, և պատմեցին նմա ասեն. որդի քո Յով-

քո որդի Յովսէփը կենդան է, և նա է բոլոր Եգիպտացոց երկրի հրամանատարը. Ոգեթափ ելաւ Յակոբը թէ կուղղորչէր աւատումներանցը. Եւ ասեցին նոցրան ամեն ինչ խօսքեր որ Յովսէփն ասել էր. Եւ որ տեսաւ սայլերը որոնք Յովսէփը ղրկել էր նոցրան վեր առնելու՝ վառվռեց նոցրա ոգին. Ինժամ Իսրայէլն ասում է. մեծ բան է ինձ հիմար՝ թէ ղորդ էլի կենդան է իմ որդի Յովսէփը, կերթամ կտեսնեմ նոցրան քանիոր չեմ մեռել. և Իսրայէլի որդիքը վեր առան իրանց հօրը, իրանց կնկտեքանցը, և իրանց ունելիքը, գրին սայլերումը, մտան յԵգիպտոս, և Յակոբը Յուդին առաջևետ ղրկեց Յովսէփի մօտ իրան առաջ գալու. Յովսէփը լծել երետ իր կառերը, և առաջ գնաց իր հօրը, որ դէմ ելաւ նոցրան՝ ընկաւ նոցրա չնքի վրա, լաց ելաւ. Իսրայէլն ասում է Յովսէփին. այսուհետև թող մեռնիմ, որովհետև տեսայ քո երեսը որ էլի կենդան ես.

սէփ կենդանի է, և նա է իշխան ամենայն երկրին Եգիպտացւոց.

Զարմացաւ 'ի միտս իւր Յակոբ, զի ոչ հաւատայր նոցա. Եւ խօսեցան ընդ նոցա զամենայն ինչ զոր ասաց Յովսէփ. Եւ իբրև ետես զսայլսն զոր առաքեաց Յովսէփ առնուլ զնա՝ արծարծեցաւ ոգին նորա. Եւ ասէ Իսրայէլ մեծ է ինձ՝ եթէ արդարև տակաւին կենդանի իցէ որդի իմ Յովսէփ, երթայց տեսից զնա մինչչև մեռեալ իցեմ. և առին որդիքն Իսրայէլի զհայրն իւրեանց, և զկանայս իւրեանց, և զինչս իւրեանց եդին 'ի սայլսն մտին յԵգիպտոս, և զՅուդա Յակոբ յառաջագոյն առաքեաց առ Յովսէփ գալնմա ընդ առաջ. Կազմեաց Յովսէփ զկառըս իւր, ել ընդ առաջ հօր իւրոյ, և իբրև յանդիման եղև նմա՝ անկաւ 'ի վերայ պարանոցի նորա, և ելաց. Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. մեռայց այսուհետև, որովհետև տեսի զերեսս քո զի տակաւին կենդանի ես.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

2n

1022

0028054

1022